

## ՈՒՇԻԴԵՆՏ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԻՆՏՐԱԿՈՐՊՈՐԱԼ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՄԵՈՍՏԱԶ ԱՊԱՀՈՎՈՂ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

**Զիլֆյան Ա.Վ.**

*Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ-ի Մորֆոլոգիայի հետազոտությունների լաբորատորիա, Հայաստան*

Ամենայն հավանականությամբ, մարդու և կենդանիների օրգանիզմում գործում են միջբակտերիալ ասոցիատիվ կապերի բազմակոմպոնետ, տարաբնույթ համակարգ: Այդ կապերի գործունեությունը մեր տեսակետից չի սահմանափակվում ներօրգանային (intra) կազմակերպմամբ, ավելին. այն ավելի ընդարձակ է, քան ամբողջ օրգանիզմի թե՛ ամենատարրական կենդանական կառուցվածքների, թե՛ ամենատարածված ինտեգրատիվ գործունեությունը: Բացառված չէ, որ մեծաքանակ միկրոկենսացենոզներն առաջին հերթին հանդիսանում են կազմակերպված, կառուցվածքային և ֆունկցիոնալ դետերմինացված համակարգեր, որոնք իրենց հերթին ապահովում են մայր օրգանիզմի ներքին միջավայրի հավասարակշռությունը:

Մեր առաջադրած հիպոթեզի միջբակտերիալ ասոցիատիվ փոխհարաբերությունները ընկած են հոմեոստազի պահպանման հիմքում և օժտված են միկրո և մակրոօրգանիզմների գոյության «փոխշահավետ», «նպատակահարմար» սկզբունքով: Իսկ ախտածին (ինֆեկցիոն) պրոցեսների զարգացումը հանդիսանում է տարբեր միջբակտերիալ ասոցիացիաների Էվոլյուցիոն ձևավորված կապերի «դինամիկ» հավասարակշռության խախտման հետևանք:

Այսպիսով, ռեզիդենտ միկրոօրգանիզմների ասոցիացիաների գործունեությունը հիմնվում են միկրո- և մակրոօրգանիզմների փոխշահավետ, նպատակահարմար համագոյության սկզբունքների վրա:

Մենք առաջ են քաշում հիպոթեզ, որի համաձայն ռեզիդենտ միկրոօրգանիզմների ինտրակորպորալ ասոցիացիաները պետք է դիտել որպես կաթնասունների օրգանիզմի ինտրեգրատիվ գործունեության ինքնուրույն համակարգ: